

www.ichd.org

Բանկերում տրվող հարցերն ու անձնական տվյալների գաղտնիությունը

*Բանկերը օրենքով պարտադրված «Ճանաչիր
քո հաճախորդին» սկզբունքից ելնելով հա-
ճախորդների անձնական տվյալներ են հարց-
նում: Ցավոք, աշխատակիցները երբեմն ա-
պաշնորի են հարցերը տալիս կամ անձնական
տվյալներից օգտվում, ինչը նյարդայնացնում է
հաճախորդներին: Մինչդեռ այս ամենն արվում
է ահաբեկչության ֆինանսավորման և փողե-
րի լվացման դեմ պայքարի օրենսդրության
չրջանակներում:*

Երբ տհաճ է անձնական տվյալներ տալ օտարին ...

Երբեմն լսում եմ մարդկանցից բողոքներ, երբ բանկում գործարք կատարելիս նրանց տարբեր հարցեր են տվել ու հաճելի չի եղել բոլորին պատասխանել: Ցանկացած մարդու համար հաճելի չի, երբ իր մասին անձնական տվյալներ են հարցնում: Ավելին, հարցերը տալուն էլ շնորհք կա, ու երբեմն մարդիկ բողոքում են կոպտությունից ու վատ սպասարկվելու որակից. վերջերս մի դեպք էլ էր արձանագրվել, երբ գործարքի ժամանակ հարցրել էին հաճախորդի տան հեռախոսի համարը, նրա աչքի առաջ զանգահարել էին տուն, ճշտել, թե արդյո՞ք այդ մարդը ապրում է տվյալ տանը ու վայր դրել հեռախոսը: Նշածս մարդու կինը ինչ ասես չէր մտածել, ներառյալ՝ «հո ամուսնուս բան չի պատահել»: Փորձեք ինքներդ պատկերացնել, զանգում են, ճշտում են բնակարանում հարազատի ապրելու փաստը ու անջատում հեռախոսը:

Երևույթը նկարագրելու համար փորձեմ այն բաժանել երեք մասի. օրենքով պարտադրված ինֆորմացիա, մարկետինգ և ապաշնորհություն:



Աշոտ Խուրշուդյանը
Մարդկային զարգացման
միջազգային կենտրոնի
փորձագետն է:
Աշխատել է ՀՀ
Կենտրոնական բանկում, ՀՀ
Ֆինանսների և
Էկոնոմիկայի
Նախարարությունում,

ՀՀ Էկոնոմիկայի Նախարարությունում:
Մասնակցել է Հայաստանի տնտեսական
բազմաթիվ բարեփոխումների:
Տնտեսագիտության թեկնածու է:

akhuryshudyan@ichd.org

1. Օրենքով պարտադրված ինֆորմացիա

Նախ և առաջ բանկերը (ու ոչ միայն բանկերը) պարտավոր են հետևել Հայաստանի օրենսդրությանը ու հաճախորդների վերաբերյալ տեղեկատվություն հավաքել (ինչպես մշտական, այնպես էլ միանգամյա գործարքի ժամանակ): Այս ամենը կարգավորվում է Փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքով և մի հատ երկար անվանմամբ ԿԲ-ի որոշմամբ, որով սահմանվում է տեղեկություն հավաքելու, տրամադրելու ու պահպանելու կանոնակարգն ու տարատեսակ ցանկեր: Այո, փողերի լվացման դեմ պայքարը համաշխարհային բնույթ է կրում, Հայաստանն էլ միջազգային պրակտիկային համահունչ համապատասխանեցրել է այս դաշտի վերահսկողությունը: Եթե արտահայտեք մի բառակապակցությամբ, այս ամենը կոչվում է «Ճանաչիր քո հաճախորդին» կոչվող սկզբունք, անգլերեն՝ KYC – Know Your Customer: Գեղեցիկ է չե՞ հնչում: Այս սկզբունքի հետևում իրականում հնարավոր ռիսկերի գնահատումն է. բայց ոչ թե բանկային ռիսկերի, այլ փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի: Ահա սրա մասին է, որ բանկերը հաճախ մոռանում են, ու այս սկզբունքը սկսում են կիրառել, իրենց բանկային շահից ելնելով, այլ ռիսկերի գնահատման համար:

Թեպետ կա փողերի լվացմամբ զբաղվող կոնկրետ մարմին, հետաքննությունը այս ոլորտում տեղի է ունենում ապակենտրոնացված ձևով՝ գործառույթը մասնակի հանձնված է բանկերին: Մասնավորապես, բանկում պետք է լինի հատուկ մարմին, որի խնդիրը հենց «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի կիրառումն է, պետք է լինեն ներքին կանոնակարգեր, տվյալների բազաներ և այլն: Ըստ էության, հենց մտնում եք բանկ, նրանք սկսում են նշած կանոնակարգով պատշաճ ուսումնասիրել հաճախորդին՝ ճանաչել նրան: Կասկածների դեպքում, ինչպես նաև մեծածավալ գործարքների դեպքում (անկանխիկ՝ 20 մլն դրամ, կանխիկ՝ 5 մլն դրամ) տեղեկատվությունը ավտոմատ փոխանցում են պատկան մարմնին՝ Կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնին:

Անձնական տեղեկությունն ընդդեմ ճանաչիր քո հաճախորդին սկզբունքի

Հաճախորդին ճանաչելու սկզբունքը նշանակում է հաճախորդի նույնականացում, իսկ բանկային հաշիվ բացելիս նաև հարցնել:

- Հաշիվը բացելու նպատակը,
- Հաշիվը բացելու պատճառը,
- Միջոցների ծագման աղբյուրը,
- Հաճախորդի գործունեության բնույթն ու ոլորտը,
- Ռեզիդենտությունը,
- Բանկերում այլ հաշիվների վերաբերյալ տեղեկություն:

Սա կանոնակարգով պարտադրվող մինիմումն է ինֆորմացիան է: Ցավոք սրտի օրենքն ու կանոնակարգը թույլատրում են բանկերին նախատեսել ռիսկերի գնահատման այլ մեխանիզմներ, ինչը հնարավորություն ու ազատություն է տալիս բանկերին բազմաթիվ այլ հարցեր տալ հաճախորդին: Բայց, սա մի կողմ դնենք, ու անդրադառնանք անհարմար վիճակներին:

Ըստ էության բանկերն իրավունք չունեն այս կոնտեքստով ստացված ինֆորմացիան ուրիշին տալ կամ այլ նպատակով օգտագործել: Սա նշանակում է, որ նույն հարցերը կարող է բազմիցս անգամ ձեզ տան, թեկուզ և դուք լինեք մշտական հաճախորդ: Նախ, բանկերը որոշ պարբերականությամբ պարտավորեն թարմացնել ինֆորմացիան: Ավելին, եթե բանկում հաշիվ եք ունեցել, հետո այլ գործարք եք անում, ապա միևնույն է, ձեզ կարող է կրկին հարցեր տալ: Անձնական ինֆորմացիայի գաղտնիությունը թույլ չի տալիս բանկերին /կամ այսպես ասեմ, պիտի որ թույլ

չտա/ Ձեր մասին ինֆորմացիան հավաքագրել, ստեղծել բազա ու հասանելի դարձնել բանկի ցանկացած աշխատողի, որպեսզի նա մտնի այդ բազա ու Ձեր ինֆորմացիան նայի, թե՛ «վախ ինչ պուպուշ հաճախորդ է, որը խնդիր չունի»: Իրականում, տվյալների բազայում մուտքագրվում է միայն «սև ցուցակ» ընկած հաճախորդների անունները, այն էլ խոսքը գնում է փողերի լվացման ու ահաբեկչության սև ցուցակների մասին, ոչ թե վարկունակության ու նման այլ կոմերցիոն սև ցուցակների: Կարող եք փորձի համար փակել ձեր հաշիվը ու հաջորդ օրը գնալ բանկ այն վերաբացելու: Բանկի աշխատողը պարտավոր է նորից նույն հարցերը ձեզ տալ՝ որտե՞ղ եք աշխատում, ի՞նչ եկամուտ ունեք և այլն: Կճանձրանաք, կզարմանաք, կնյարդայնանաք, կպնդեք, որ այդ ինֆորմացիան բանկում կա ... Իրականում պետք է անհագստանաք, եթե - Ձեզ հարցեր չտան ու ավտոմատ բազայից վերցնեն Ձեր տվյալները, նշանակում է Ձեր անձնական տվյալները այլ նպատակով օգտագործվում է ու հասանելի է բանկի աշխատակցին: Մի քիչ միզուցե խիստ եմ ասում, քանի որ բանկ-հաճախորդ հարաբերությունը վստահության վրա է կառուցվում, ու հենց այս վստահության սկզբունքն էլ պիտի որ առաջնորդի բանկի հարցերին ճիշտ պատասխանելիս, սակայն, եթե Ձեզ մտահոգում է ձեր անձնական տվյալների անձեռնմխելիությունը, ապա պետք է մտահոգվեք, թե ինչպես են դրանք հավաքագրվում ու օգտագործվում:

Հիմա գամ մտահոգություններին. Փողերի լվացումը կանխելու համար բանկերը գնահատում են տարբեր ռիսկեր: Ամբողջ կարգն այստեղ բնականաբար չեմ գրի, բայց երեք օրինակ կբերեմ:

Այս մեկը տարածված է Հայաստանում: Ինտերնետ սայթ ունեք, որի վրա գովազդային վահանակ եք դրել ու փոքր-փոքր գումարներ են գալիս: Չզարմանաք եթե Ձեր հաշիվը սառեցվի: Փողերի լվացման սխեմաներից մեկը հենց փոքր գործարքներով է տեղի ունենում: Վախենալ պետք չի, բանկին պետք է բացատրել այդ գումարների աղբյուրը:

Կամ, նշել եք եկամտի փոքր աղբյուր, մեկ էլ մեծ գումար է նստում Ձեր հաշվին: Հայաստանի աշխատաշուկայի չկանոնակարգված ու եկամուտների ոչ ստաբիլ վիճակում հնարավոր սցենար է, որը սակայն կասկածելի է թվում:

Իսկ այս մեկը Հայաստանյան իրականությունը մոտեցնում է ահաբեկչական-մաֆիոզ համակարգերին: Մենք սոցիալական լուրջ կապեր ունեցող երկիր ենք, որտեղ եղբոր

կնոջ հորաքույրի ամուսնու եղբոր զոքանչի համար կարող ենք գումար ստանալ: Սա ահաբեկչության դեմ պայքարի ու փողերի լվացման միջազգային պրակտիկայում վտանգավոր գործարք է համարվում, քանի որ ուրիշի համար ֆինանսական գործարքներ եք անում, ինչն արդեն ռիսկային է համարվում:

Հայաստանյան բանկերի ազատությունը

«Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքը երկրից երկիր տարբեր կանոններ է ունենում, ինչպես նաև անձնական ինֆորմացիայի գաղտնիության մոտեցումներն են տարբեր լինում: Մինչդեռ շատ խոշոր բանկեր, որպեսզի պայքարեն փողերի լվացման դեմ, մեծ գումարներ են ներդրում սեփական համակարգերը զարգացնելու համար: Հաճախ նրանց ներդրած համակարգը հակասում է տեղական օրենքներին, ու ստիպված բանկերը պետք է ադապտացնեն իրենց մասնաճյուղերի օպերացիոն համակարգերն ու կանոնակարգերը: Հայաստանի օրենսդրությունը ուղղակի ազատորեն թույլատրել է ցանկացած բանկի սեփական հայեցողությամբ կանոնակարգել հանցագործ ճանապարհով գումարների շրջանառության դեմ պայքարը: Ու այստեղ էլ հենց կրակն ենք ընկել: Հայաստանում կան բազմաթիվ միջազգային բանկեր, որոնց համակարգերը մշակվում են դրսում: Ու առանց որևիցե ադապտացիայի այդ համակարգը ներ են դնում Հայաստանում: Սա էլ հենց բերում է հաճախորդների դժգոհության ու զարմանքին: Օրինակ, HSBC-ն վճարել է ԱՄՆ-ին 1.9 միլիարդ դոլարի տուգանք փողերի լվացման գործարքները չբացահայտելու համար՝ հնարավորություն տալով մեքսիկական նարկոփողերի մուտքը բանկային համակարգ: Բնական է, որ սրանից հետո այդ բանկը ավելի է խստացրել իր համակարգը: Ու Հայաստանի պարագայում, ադապտացիայի կարիք չի ունենա, ու նոր խիստ կանոններ կարող են ներմուծել Հայաստան: Կանոնակարգը սա թույլատրում է:

2. Մարկետինգ

Տեղեկության հավաքագրման երկրորդ նպատակը մարկետինգն է: Հաճախորդի մասին բանկերը սկսում են հավաքել ինֆորմացիա՝ շուկան ուսումնասիրելու, հաճախորդին հնարավոր ֆինանսական ծառայություններ առաջարկելու, բանկային ռիսկերը գնահատելու ու նման բաների համար: Այստեղ խնդիրը հստակ է. Բանկերը երբ հաճախորդին հարցեր են տալիս, չեն ասում, թե այս հարցը

օրենքով պարտադրված «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքից է բխում, իսկ ահա այս մյուս հարցերը՝ մարկետինգային են: Դրանք միախառնվում են իրար՝ Ձեր կնոջ եկամուտները, երեխաների սեռը, տարիքը, այլ բանկերում ունեցած վարկերը, «կոշիկի համարը, սիրած գույնն ու սիրելի քաղաքական գործիչը»: Ի դեպ, հաճախ հավաքագրվում են ձեր ընտանիքի անդամների վերաբերյալ անձնական տվյալներ՝ կնոջ տարիքը, անունը ազգանունը, երեխաների տարիքն ու անունն ազգանունը և այլն: Ցավալից այն է, որ այս ամենը կարող են ներկայացնել որպես «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի կիրառում՝ իբր ստուգում են փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը: Հիշեցնեմ, ԿԲ կանոնակարգը նման հայեցողության տեղ է թողել:

Ես կարող եմ անձնական փորձով կիսվել: Երբ տեսնում եմ, որ հարցերը մարկետինգային են՝ կտրուկ ասում եմ, որ այդ ինֆորմացիան չեմ տալու, արդեն չափից շատ մանրասմներ են ինձնից ուզում: Աշխատողը շփոթվում է, սկսում է պնդել, որ կարգով այդպես է: Ես էլ իմն եմ պնդում ու ուլտիմատում ներկայացնում, որ եթե այդ հարցերը շարունակվեն՝ իրենց բանկից չեմ օգտվի: Թեպետ նշեմ, որ այստեղ էլ խնդիրներ կարող են լինել: Վաղուց շատ ընկերություններ ձևը գտել են և երկար պայմանագրի ձևեր ունեն, որով ըստ էության համաձայնվում եք հրաժարվել անձնական տվյալների գաղտնիության ձեր իրավունքներից: Իհարկե, սա փոխադարձ շահաբեր է, օրինակ, շատ խանութներ գեղջի քարտ են տալիս, բայց դիմացը պատասխանում եք իրենց հարցերին, տալիս ձեր անձնական շատ տվյալներ՝ հատկապես կոնտակտները, որից հետո էլ իրենք սկսում են օգտվել ձեր տվյալներից: Ինտերնետում վիճակն ավելի խորն է՝ երբևէ ընթերցե՞լ եք Ֆեյսբուկի պայմանագիրը: Լավ, թեմայից չչեղվեմ, ուղղակի այս օրինակները նշում եմ, որ պարզաբանեմ, որ բանկն էլ մյուս ֆիրմաների նման շուկան ուսումնասիրելու կարիքից դրդված հավաքագրում է անձնական տվյալներ: Ու անձնական տվյալների գաղտնիության պահպանությունը այս դարի լրջագույն խնդիրներից մեկն է, ամբողջ հարցը այդ տվյալների հասանելիության, մատչելիության, օգտագործման լեգալություն է: Ու բանկերը պետք է լուրջ վերաբերվեն հատկապես այս ռիսկերին:

3. Ապաշնորհ սպասարկում

Ընդհանրապես հաճախորդի հետ շփվելը ծառայության ոլորտում որակի կարևորագույն մասն է: Ավելին, այնպիսի հարցերի հետ

շփվելը, ինչը ենթադրում է մարդու անձնական տվյալների հարցում, պետք զգույշ ու էթիկայի սահմաններում լինել: Ինչպես նշեցի, յուրաքանչյուր բանկ ունի «**Ճանաչիր քո հաճախորդին**» սկզբունքի կանոնակարգ, ու հաճախ հաճախորդի հետ շփվող աշխատակիցը հենց շարժվում է սրանցով: Ամբողջ հարցն է՝ ինչպե՞ս: Բանկ-հաճախորդ շփումը բննիչ-մեղադրյալ շփում չի, որին մեղադրյալը պարտավոր է բոլոր հարցերին պատասխանել: Ավելին, հաճախորդներին հաճախ ընդհանրապես չեն տեղեկացնում, թե ինչու են այդ հարցերը տալիս, ու հաճախորդները նեղվում են անձնական տվյալներ հաղորդելիս: Ու ստացվում է այնպես, որ, որպեսզի պատասխանատվության բեռը աշխատակիցը իր վրայից զցի, թռչնակ (галочка) դնելու համար հետևում է կանոնակարգի ցանկով պահանջվող ինֆորմացիայի ստուգմանը, ու դա կատարում է այնպիսի ապաշնորհ ձևով, որ ոչ միայն հաճախորդ են կորցնում, այլև մարդկանց մոտ բանկի դեմ պայքարելու ցանկություն են առաջացնում: Հաճախորդը սկսում է մտածել, որ խախտվում է իր անձնական ինֆորմացիայի գաղտնիության իրավունքը: Կոնկրետ վերոնշյալ օրինակում, երբ աշխատակիցը զանգահարել է բնակարան, որպեսզի ստուգի հաճախորդի տված հեռախոսահամարի իսկությունը, փորձել է ըստ եռլայան անուղղակի ձևով ստուգել մարդու ինքնության վավերականությունը: Ազնվորեն չգիտեն թե ինչու, քանի որ գործարքի ռիսկայնությունը շատ ցածր է եղել նման «հետախուզության» դիմելու համար՝ անձը հաստատող փաստաթուղթը բավարար էր գործարքն անելու համար: Բայց դե դա երևի այդ բանկի ներքին կանոնակարգն է, աշխատակիցն էլ ապաշնորհ է եղել:

Ընդհանրապես, ես մի քանի բանկերում սպասարկվելուց նկատել եմ մի հետաքրքիր երևույթ: Հաճախորդների հետ շփվող աշխատակիցները չգիտեն, թե ինչու են այդ հարցերը տալիս: Նույնիսկ փորձնական մի երկու անգամ ստուգել եմ: Նրանք ունեն «ինստրուկցիա» ու հետևում են դրան: Էթիկան անհնար է կանոնակարգել, այն գիտելիք ու վերաբերմունք է: Ու հաճախորդների հետ շփվող աշխատակիցները պարտավոր են իմանալ «**Ճանաչիր քո հաճախորդին**» սկզբունքն ըստ եռլայան, ոչ թե ըստ ընթացակարգի: Այլապես, խաբվելով սկզբունքի անվանմանը կարող են մտածել, որ այդ ամենն արվում է հաճախորդին բառիս բուն իմաստով իմանալու համար: Չէ, սիրելի բանկի աշխատակիցներ, այդ ամենն արվում է միայն մեկ նպատակով՝ իմանալով հաճախորդին՝ ճշտել գործարքների

հետ կապված փողերի լվացման ու ահաբեկչության սպասարկման ռիսկերը: Ու այն էլ օրենքի պարտադրմամբ:

Առաջարկություններ

Կենտրոնական Բանկին

Ընդհանրապես Կենտրոնական բանկին երկու հստակ առաջարկություն ունեմ: Նախ, կանոնակարգից հանել բանկերին հայեցողականություն թույլատրող բոլոր դրույթները: «**Ճանաչիր քո հաճախորդին**» սկզբունքը պետք է լինի ոչ միևնույն ու ոչ էլ անսահման թույլատրելի, այն պետք է լինի հստակ: Պատշաճ ուսումնասիրությունն էլ պետք է լինի ապացուցելի, որ այն ուղղված է միայն օրենքի հիմնական նպատակին: Իհարկե, բանկերն իրավասու են լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին կոմերցիոն նպատակով, բայց դա չպիտի արվի որպես «**Ճանաչիր քո հաճախորդին**» սկզբունքի կիրարկում:

Երկրորդ առաջարկս Կանոնակարգ 5-ի Օրինակելի ցանկի «Բանկերում ունեցած բանկային հաշիվների մասին տեղեկությունը» հանելն է: Սա իրականում կիրառվում է կոմերցիոն նպատակներով ու փողերի լվացման հետ առնչություն չունի: Իհարկե, ռիսկային է շել (shell) բանկերում, կամ թեկուզ Հայաստանից դուրս այլ բանկերում հաշիվներ ունենալու փաստը, ու կարելի է հարցադրումը թողնել այս տեսքով:

Բանկերին

Բանկերն իրենց ինտերնետային կայքերում չունեն հաշիվ բացելիս տրվող հարցերի ցանկն ու «**Ճանաչիր քո հաճախորդին**» սկզբունքի բացատրությունը՝ թեպետ գուզելիս կգնտենք համապատասխան կանոնակարգը: Ժամանակակից ցանկացած մարդ տհաճությամբ է անձնական ինֆորմացիա տալիս օտարի: Առնվազն նրան պետք է տեղեկացնել, թե ինչու՞ է նա այդ տեղեկությունը հաղորդում: Հաճախորդի հետ շփվող բանկի աշխատակիցներն էլ պետք է վերապատրաստվեն այս ուղղությամբ ու հաճախորդի հետ շփվելիս բացատրեն հարցերի իմաստը: Ընդհանրապես «**Ճանաչիր քո հաճախորդին**» տերմինը ստեղծվել է հենց այդպես հեշտ ընկալելի, որպեսզի հաճախորդներին պարզ ձևով բացատրվի մի բան, որը օրենքներով ու կանոնակարգերով հարյուր Էջի վրա է շարադրած: Այդ տերմինը պետք է դառնա ֆինանսական գրագիտության մաս՝ բոլոր հաճախորդները պետք է այն իմանան:

39

Այս մի բանն էլ արդեն բաղաբական իշխանության համար գրեմ: Հայաստանը, լինելով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի կողմ, այդպես էլ չստորագրեց կոնվենցիայի անօրինական հարստացման (illicit enrichment) հատվածը: Բարեբախտաբար - Հայաստանում պետական ծառայողները հայտարարագրում են իրենց ունեցվածքը, ու կոնվենցիայի այդ դրույթը եթե կիրառվեր, ապա հարստության աղբյուրի բացակայությունը ավտոմատ կբրեժականացներ այդ հարստությունը՝ այն կոնֆիսկացնելու հնարավորությամբ: Երբ նայում եմ բանկերում անօրինական փողի մուտքի հանդեպ ունեցած խիստ օրենսդրությունը ու «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի կիրառմանը, մոտս հարց է ծագում. Մեր հարուստ որոշ պաշտոնյաներ ինչպե՞ս են բանկային համակարգից օգտվում: Նրանց ցանկացած մեծ գործարք ավտոմատ ռիսկային պետք է դիտարկվեր, քաղաքական էլիտայի մի ահռելի մաս էլ սև - ցուցակներում պետք է հայտնված լինեին: Այս զավեշտի պատասխանը ես չունեմ: Միգուցե այդ մարդիկ դրսերում են իրենց գումարները պահում: Այն էլ միայն օֆշորում կարող են առանց եկամտի աղբյուրը նշելու գումարներ տեղաշարժել: Իրականում, եթե փողերի լվացման դեմ պայքարը լիարժեք իրականացվի, շատ կոռուպցիոներներ կընկնեն եկամուտները օրինականացնելու մեծ ռիսկերի տակ: Ինչպես ասում են՝ երա՛գ-երա՛գ այս աշխարհում ...

339

Ես հանցագործության դեմ պայքարի բյուրոկրատական մեխանիզմների արդյունավետությանը չեմ հավատում: Ինչքան խստանա բյուրոկրատիան, այնքան հանցագործներն ավելի արդյունավետ ձևեր կգտնեն այն շրջանցելու համար: Իրականում, ազնիվ

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը խորհրդային և հարավկովկասյան երկրների համանման կազմակերպությունների ցանկում ինքնատիպ և ազդեցիկ վերլուծական կենտրոնի համբավ ունի: Իրադարձություններով հարուստ իր ողջ պատմության ընթացքում Կենտրոնը հավատարմորեն հետևել է իր հիմնական սկզբունքներին և նպատակներին, մասնավորապես՝ միավորել հասարակական, գիտական, մշակութային և գործարար ոլորտների կարող և առաջադեմ միտքը, հզորացնել ժողովրդավարական մեխանիզմներն ու սերմանել ազատ շուկայական մեխանիզմներ՝ նպաստ բերելով կովկասյան երկրների տարածաշրջանային համագործակցության և տնտեսական զարգացման ռազմավարությունների մշակման գործընթացին:

մարդն է սկսում նյարդայնանալ իր անձնական տվյալների մասին հարցերը լսելիս: Մինչդեռ հանցագործը այդ հարցերին դերասանական պատրաստությամբ ու համապատասխան թղթերով պատրաստ կզնա: Սրա լավագույն ասպացույցը վերոգրյալ HSBC-ի օրինակն է: Ու ընդհանրապես, չափից մեծ փողերի լվացման գործարքները երբ բացահայտվում են, պարզվում է որ այս սխեմաները չեն աշխատել: Հայաստանի պարագայում ես ուղղակի ցանկացա հաճախորդներին տեղեկացնել, թե ինչու են անձնական հարցեր նրանց բանկերը տալիս, որ ավելորդ չնայրդայնանան մի կողմից, մյուս կողմից էլ Հայաստանի բանկային համակարգի իմիջային շահից է բխում այդ ընթացակարգերին հետևելը ու շատ կարևոր է միջազգային ֆինանսական շուկայի ինտեգրված լինելը. հրաժարվել ու դեն նետել ընթացակարգերը չենք կարող: